ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/17, 26.04.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ Ժորա Ավագյան Ա/Ձ

Պատվիրատու՝ Վանաձորի Նեցուկ ՀՁ ՀՈԱԿ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ ՀՀ ԼՄՎՔ-ՆԵՑՈՒԿ ՀՁ-ԳՀԱՊՁԲ-19/11 ծածկագրով գնանշման հարցում, ծառերի, սերմերի, սածիլների և սոխուկների ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

Պարտավորեցնել ՀՀ ԼՄՎՔ-ՆԵՑՈՒԿ ՀՁ-ԳՀԱՊՁԲ-19/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին փոփոխել և ուժը կորցրած ճանաչել 17.04.2019թ. 14:00-ին հրավիրված նիստի թիվ 4 արձանագրությամբ Ժորա Ավագյան Ա/Ձ-ի հայտը մերժելու մասին որոշումը, ինչպես նաև ուժը կորցրած ճանաչել 1-ին չափաբաժնի համար «Պստո» ՍՊԸ և Նարեկ Մայիլյան Ա/Ձ /կոնսորցիումին/, 10, 12-18 չափաբաժիններում Աշոտ Մկրտչյան Ա/Ձ-ին առաջին տեղն զբաղեցնող ճանաչելու, իսկ 9-րդ չափաբաժնի համար գների նվազեցման բանակցություններ կազմակերպելու վերաբերյալ որոշումները:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ,

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Տ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ բողոքի քննության նպատակով հրավիրվող նիստերին առցանց կարող եք հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով կայք-էջում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

098 67-67-27

zhora.avagyan@bk.ru

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին
(հասցե՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան փ. 1)

Բողոք ներկայացնող անձ՝
Ժորա Ավագյան Ա/Ձ
(հասցե՝ Լոռու մարզ, գ. Քարինջ, 1-ին փ., տ. 48,
անձնագիր AN 0466960, տրված 055-ի կողմից, 08.05.2013թ-ին,
«Յունիբանկ» ԲԲԸ «Վանաձոր» մ/ճ, h/h 24101041196500)

Պատվիրատու՝ Վանաձոր համայնքի «Նեցուկ ՀՁ» ՀՈԱԿ
(հասցե՝ ք. Վանաձոր Թատերական 6/2)

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
ՀՀ ԼՄՎՔ-ՆԵՑՈՒԿ ՀՁ-ԳՀԱՊՁԲ-19/11,
ծառերի, սերմերի, սածիլների և սոխուկների ձեռքբերում

Վանաձոր համայնքի «Նեցուկ ՀՁ» ՀՈԱԿ-ը (այսուհետև՝ Պատվիրատու) ծառերի, սերմերի, սածիլների և սոխուկների ձեռքբերման նպատակով ս.թ. ապրիլին կազմակերպել է ՀՀ ԼՄՎՔ-ՆԵՑՈՒԿ ՀՁ-ԳՀԱՊՁԲ-19/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ: Ընթացակարգին մասնակցել եմ նաև ես՝ Ժորա Ավագյան Ա/Ձ–ն: Հայտերի բացումից հետո, ս.թ. ապրիլի 12-ին գնահատող հանձնաժողովի քարտուղարից էլեկտրոնային փոստով ստացել եմ Պատվիրատուի ծանուցումն այն մասին, որ ՀՀ ԼՄՎՔ-ՆԵՑՈՒԿ ՀՁ-ԳՀԱՊՁԲ-19/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2019 թվականի ապրիլի 09-ի թիվ 2 արձանագրությամբ 1, 9, 10, 12, 13, 14, 15, 16, 17, 18 չափաբաժինների համար ճանաչվել եմ ընթացակարգի առաջին տեղն զբաղեցնող մասնակից և անհրաժեշտ է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացրել եմ հանձնաժողովի քարտուղարին ս.թ. ապրիլի 17-ին: Սակայն հետագայում պարզվեց, որ իմ հայտը մերժվել է սահմանված ժամկետում որակավորման փաստաթղթեր չներկայացնելու պատճառով: Այսպես, ՀՀ ԼՄՎՔ-ՆԵՑՈՒԿ ՀՁ-ԳՀԱՊՁԲ-19/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ս.թ. ապրիլի 17-ին, ժամը 14:00-ին հրավիրել է նիստ, և արձանագրել, որ ընթացակարգի հրավերի 7.12 կետի 4-րդ մասի համաձայն 12.04.2019թ. ժամը 13:04-ին առաջին տեղն զբաղեցրած մասնակիցներին ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում ապրանքի ամբողջական նկարագիրը էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկելու մասին: Այնուհետև հանձնաժողովը եզրակացրել է, որ «Սույն ենթակետով սահմանված ժամկետումը ավարտվել է 2019թ. ապրիլի 17-ին ժամը 13:04-ին:» և մերժել է իմ հայտը, 1, 10, 12-18 չափաբաժիններում առաջին տեղն զբաղեցնող է ճանաչել «Պստո» ՍՊԸ և «Նարեկ Մայիլյան» ԱՁ /կոնսորցիում/-ին և «Աշոտ Մկրտչյան» Ա/Ձ-ին, իսկ 9-րդ չափաբաժնի համար կազմակերպել գների նվազեցման բանակցություններ:

Անհասկանալի է, թե Հանձնաժողովն ինչպես և ինչ սկզբունքներով է առաջնորդվել ժամկետը հաշվարկելիս, սակայն միանգամայն հստակ է, թե ինչպես պետք է այդ ժամկետը հաշվարկվեր: Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 4-րդ

ՄՏԻՑ N Ն- 18856 19
5 «26» 04 2019թ

հոդվածի համաձայն գնումների մասին ՀՀ օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, նույն օրենքից և իրավական այլ ակտերից: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 330-րդ հոդվածի համաձայն եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը: «Նորմատիվիրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն: Ակնհայտ է, որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետին, ինչպես նաև ընթացակարգի հրավերի 7.12 կետին համապատասխան նախատեսված 3 աշխատանքային օրվա ժամկետը, որը սկսել է հոսել 15.04.2019թ-ից և 3-րդ աշխատանքային օրը չէր կարող ավարտվել ապրիլի 17-ի ժամը 13:04-ին, իսկ իմ կողմից ներկայացված հայտը ներկայացվել է թեև ժամը 13:04-ից հետո, բայց սահմանված ժամկետում 17.04.2019թ.:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ 1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները). 2) հանձնաժողովը գնահատում է նույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և այն, որ հրավերով պահանջվող փաստաթղթերը ներկայացրել եմ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով, ինչպես նաև ընթացակարգի հրավերի 7.12 կետով նախատեսված 3 աշխատանքային օրվա ժամկետում, գտնում եմ, որ ընթացակարգին ներկայացված իմ հայտը մերժվել է ոչ իրավաչափ և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներին համապատասխան խնդրում եմ պարտավորեցնել ՀՀ ԼՄԿԲ-ՆԵՑՈՒԿ ՀԶ-ԳՀԱՊՁԲ-19/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին փոփոխել և ուժը կորցրած ճանաչել 17.04.2019թ. 14:00-ին հրավիրված նիստի N 4 արձանագրությամբ «Ժորա Ավագյան» Ա/Ձ–ի հայտը մերժելու մասին որոշումը, ինչպես նաև ուժը կորցրած ճանաչել 1-ին չափաբաժնի համար «Պատո» ՍՊԸ և «Նարեկ Մայիլյան» ԱՁ /կոնսորցիում/-ին, 10, 12-18 չափաբաժիններում «Աշոտ Մկրտչյան» Ա/Ձ-ին առաջին տեղն զբաղեցնող ճանաչելու, իսկ 9-րդ չափաբաժնի համար գների նվազեցման բանակցություններ կազմակերպելու վերաբերյալ որոշումները:

Կից ներկայացնում եմ Հանձնաժողովի 17.04.2019թ. 14:00-ին հրավիրված նիստի N 4 արձանագրությունը, հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստից ստացված նամակի պատկերամուտերը, հանձնաժողովին ուղղված՝ իմ նամակի պատկերամուտը և կից փաստաթղթերը, բողոքարկման վճարի անդորրագրի պատճենը:

Առդիր 18 թերթ:

Ժ. Ավագյան